

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Յօդուածների ընդունման նախապայմաններ

Խմբագրութեանը ներկայացուող նիւթերը պէտք է՝

Ա) համապատասխանեն հանդէսի ձեւաչափին եւ ուղղուածութեանը (կրօնագիտութիւն կամ հայագիտութիւն),

Բ) ապահովեն գրական եւ գիտական պատշաճ շարադրանք արեւելահայերէն կամ արեւմտահայերէն (դասական կամ խորհրդային ուղղագրութեամբ),

Գ) երբեւէ-որեւէ տեսքով հրապարակուած չլինեն,

Դ) ապահովեն գիտական որոշ նորոյթի առկայութիւն կամ անդրադարձ օրախնդիր հարցերի:

Համակարգչային պահանջներ

Շարուածքը՝ Word, LibreOffice կամ OpenOffice ծրագրերով, Տառատեսակը—Unicode (Sylfaen, տառաչափը՝ 12 pt, տողատակն ու ամփոփումները՝ 10 pt): Թուղթը—A4 Լուսանցք—բոլոր կողմերից՝ 2 սմ, տողերի միջակայքը՝ 1,5: Էջերի քանակը - մինչեւ 20 էջ (կամ առաւելագոյնը 36000 նիշ): Նկարները—Գծանկարները, սեւ-սպիտակ եւ գունաւոր լուսանկարները ներկայացնել յօդուածից առանձին՝ որպէս յաջորդական միաւորներ (նկ./աղ. 1, 2, 3...)՝ ոչ պակաս քան՝ 600 DPI խտութեամբ: Նկարներին կցել «Նկարների ցանկ»՝ իւրաքանչիւրի բացատրութեամբ եւ նկարի աղբիւրի յղմամբ: Ամփոփումները— Անգլերէն եւ ռուսերէն, ծաւալը՝ ոչ աւել քան 150 բառ իւրաքանչիւրը: Երկու լեզուներով գրուած ամփոփումների բովանդակութիւնը պէտք է լինի նոյնը: Տառադարձել նաեւ հեղինակի անուն-ազգանունը եւ թարգմանել յօդուածի վերնագիրը: